ՈՒԺի մեջ է 2026թ. հունիսի 19-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

17 հունիսի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ և խնայողական հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1] Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-22:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:30-21:30):
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:

- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

10. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում: Բանկը կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք, այդ թվում՝ Բանկի կողմից տարանցիկ դասակարգված գործարքներ:

11. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

12. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
1. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի բացում[2] Ընդ որում՝ հաշվի բացման նախապայմաններ կարող են հանդիսանալ՝ - Բանկի կողմից սահմանված տիպային պայմանագրի կնքումը, - «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկի լրացումը Հաճախորդի կողմից, - Հաճախորդի համաձայնությունը՝ ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից իր մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ, - Բանկի կողմից Հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի բացահայտումը, - Հաճախորդի վերաբերյալ ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի (OFAC), Եվրամիության (EU) կամ Բանկի կողմից կիրառվող այլ հատուկ ցանկերում ՓԼ/ԱՖ, Միջազգային սանկցիաների գծով բացասական տեղեկությունների բացակայությունը, - ֆիզիկական անձանց դեպքում՝ Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրի կամ տարածքի[3] քաղաքացի կամ ռեզիդենտ չլինելը, նշված երկրներում կամ տարածքներում կենսական շահերի բացակայությունը, - Բանկի կողմից հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը, - իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրում կամ տարածքում գրանցված չլինելը, գործունեության կամ գործարար կապերի, մասնակիցների (իրական շահառուների) ուղղակի կամ անուղղակի կապի բացակայությունը նշված երկրի կամ տարածքի հետ: Ընթացիկ և/կամ խնայողական հաշվում առկա գումարների տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումներից/ սահմանափակումներից, Միջազգային սանկցիաների պահանջներից և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/ սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով, մասնավորապես հետևյալ գործառնությունները՝ • անկանխիկ եղանակով փոխանցված և/կամ մուտքագրված ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով գումարի կանխիկ տրամադրումը, • կանխիկ ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով գումարի ստացման նպատակով ՌԴ ռուբլի արժույթով գումարի փոխարկումը և այլն:	անվճար

[2] Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին առաջին բանկային հաշվի (ընթացիկ, խնայողական, քարտային, ավանդային) բացման դեպքում գանձվում է միանվագ միջնորդավճար՝ 15,000 ՀՀ դրամ, բացառությամբ այն դեպքի, երբ հաշիվը բացվում է Բանկի սովորական (հասարակ) բաժնետոմսեր ձեռք բերելու կամ վերջիններիս բաժանորդագրվելու, կենսաթոշակ կամ Սոցիալական ապահովության ծառայությունից փոխանցված պարբերական բնույթ կրող նպաստները, Սոցիալական փաթեթի գումարը ստանալու համար կամ երբ հաշիվը բացվում է աշխատավարձի սպասարկման նպատակով:

[3] Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկիր կամ տարածք է համարվում ՄԱԿ-ի, ԱՄՆ Գանձապետարանի արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC), Եվրամիության կողմից միջազգային սանկցիաների ենթարկված երկրները և տարածքները:

Ընթացիկ հաշիվ բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուսական ռուբլով, բրիտանական ֆունտով, շվեյցարական ֆրանկով, վրացական լարիով, չինական յուանով և ԱՄԷ դիրհամով [4] Խնայողական հաշիվ բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով	
2. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվին կանխիկ կամ անկանխիկ մուտքագրվող գումարների առավելագույն սահմանաչափ (մեկ գործարքի համար)՝ - ՀՀ դրամ - արտարժույթ	 անսահմանափակ 20 մլն ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ
3. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի միջին օրական մնացորդի շեմ՝ հաշվի անվճար սպասարկման համար՝	
- ԳՓՄՄ[5] անդամներ	5 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ռեզիդենտներ (ֆիզիկական անձինք)	20 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ռեզիդենտներ (իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր)	50 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ոչ ռեզիդենտներ	50 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
3.1. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի միջին օրական մնացորդի շեմը վերաբերում է բոլոր արժույթներով հաշիվներին առանձին-առանձին, սակայն հաճախորդը կարող է բոլոր ընթացիկ և/կամ խնայողական հաշիվների գծով շեմի պահանջն ապահովել առնվազն մեկ ընթացիկ, խնայողական կամ ավանդային հաշվի վրա:	
4. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի սպասարկման միջնորդավճար (անկախ հաշիվների քանակից)	
4.1. Ֆիզիկական անձանց համար	
- եթե ֆիզիկական անձի՝ Բանկում ունեցած ընթացիկ և/կամ խնայողական հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը մեծ կամ հավասար է Սակագների 3-րդ կետով սահմանված շեմից, - եթե ֆիզիկական անձ հաճախորդն ունի միայն գործող վճարային քարտեր, որոնցից առնվազն մեկն արտարժութային է, և միայն ընթացիկ դրամային հաշիվ, - եթե ֆիզիկական անձ հաճախորդն ունի «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» պրոդուկտ, գործող վճարային քարտեր, որոնցից առնվազն մեկը արտարժութային է, և միայն ընթացիկ դրամային հաշիվ, - եթե ֆիզիկական անձ հաճախորդն ունի Բանկի պարտատոմսեր, - եթե ֆիզիկական անձ հաճախորդն այն օգտագործում է կենսաթոշակ կամ Սոցիալական ապահովության ծառայությունից փոխանցված պարբերական բնույթ կրող նպաստները ստանալու նպատակով - եթե հաշիվը հանդիսանում է Սոցիալական փաթեթի հաշիվ	անվճար
- եթե ֆիզիկական անձի՝ Բանկում ունեցած ընթացիկ և/կամ խնայողական հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը փոքր է Սակագների 3-րդ կետով սահմանված շեմից	ամսական 300 ՀՀ դրամ
4.2. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար	
- եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը մեծ կամ հավասար է Սակագների 3-րդ կետով սահմանված շեմից, - եթե իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն ունի Բանկի պարտատոմսեր	անվճար
- եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ[6]՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը փոքր է Սակագների 3-րդ կետով սահմանված շեմից	ամսական 1 000 ՀՀ դրամ

[4] Վրացական լարի, չինական յուան և ԱՄԷ դիրհամ արժույթներով կատարվում են միայն անկանխիկ մուտքային և անկանխիկ ելքային գործառնություններ:
[5] ԳՓՄՄ՝ Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում հասարակական կազմակերպություններ:

[6] Բացառությամբ անկանխիկ գործառնությունների մասին օրենքի շրջանակում ԱՍԿ-ներով համագործակցող ԱՁ-ների:

4.3. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի հաշվից յուրաքանչյուր ամսվա վերջին բանկային օրը:	
4.4. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի դրամային հաշվից: Դրամային հաշվին միջոցների բացակայության դեպքում այն գանձվում է հաճախորդի արտարժութային հաշվից, և արտարժույթի փոխարկումը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ հրապարակած արտարժույթների միջին փոխարժեքով: Հաշվարկը կատարվում է ընթացիկ և/կամ խնայողական հաշվի բացմանը (վերաբացմանը) հաջորդող և հաշվի փակմանը նախորդող ամիսների համար:	
4.5. Ընթացիկ և խնայողական բոլոր հաշիվները միաժամանակ փակելու դեպքում՝ նախկինում հաշվարկված սպասարկման միջնորդավճարը չի գանձվում և զրոյացվում է:	
4.6. Ընթացիկ և/կամ խնայողական և/կամ ժամանակավոր հաշվի սպասարկման միջնորդավճարի բացասական մնացորդի իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 3 000 ՀՀ դրամին, իսկ ֆիզիկական անձանց համար 600 ՀՀ դրամին հավասարվելուն պես՝ ավտոմատ կերպով դադարեցվում է հետագա ամիսների սպասարկման միջնորդավճարների պարտքի կուտակումը:	
5. Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի վերաբացում՝	
5.1. ֆիզիկական անձանց համար	անվճար
5.2. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար	3 000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի վերաբացման համար, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ոչ ավելի, քան 3 000 ՀՀ դրամ
6. Սակագների 4-րդ և 5-րդ կետերի դրույթները չեն կիրառվում հետևյալ դեպքերում. - պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպությունների ընթացիկ հաշիվների նկատմամբ, - Բանկում ժամանակավոր հաշվի առկայության դեպքում՝ այդ հաշիվը բացելու կամ վերաբացելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:	
7. Հաշվի քաղվածքի (ՀՀ օրենսդրությամբ **պարտադիր** տրամադրման ենթակա) տրամադրում Սոցիալական փաթեթի հաշվի քաղվածքի տրամադրում	անվճար
7.1. Հաշվի քաղվածքի կրկնօրինակի, քաղվածքի (ՀՀ օրենսդրությամբ **ոչ պարտադիր** տրամադրման ենթակա) տրամադրում.	
- մինչև 3 ամիս (ներառյալ) վաղեմության դեպքում	անվճար
- 3-12 ամիս (ներառյալ) վաղեմության դեպքում	3 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 1 տարուց ավելի վաղեմության դեպքում	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
8. Փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրում	
- մինչև 3 ամիս վաղեմության դեպքում	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 3-12 ամիս վաղեմության դեպքում	2 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 1-3 տարի վաղեմության դեպքում	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 3 տարուց ավել վաղեմության դեպքում	10 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
9. Տեղեկանքների տրամադրում[7], լիազորագրի պատրաստում և հաստատում	
- աուդիտորական հարցման պատասխան	15 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- լիազորագրի պատրաստում և հաստատում	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝

[7] Տեղեկանքների տրամադրման սակագինը տարածվում է Բանկի մասնաճյուղերում, www.acba.am կայքի և acba digital WEB տիրույթի միջոցով բոլոր տեսակի տեղեկանքների ստացման հայտերի վրա: www.acba.am կայքի «Օնլայն հայտեր» բաժնից լրացնելով դեսպանատան տեղեկանքի համար հայտը՝ հաճախորդը կարող է ստանալ տեղեկանքը՝ այցելելով Բանկ իր կողմից հայտում նախապես նշված օրը:

	ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 3 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- պետական ռեգիստրի տեղեկանքի տրամադրում	3 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
Տեղեկանքների տրամադրում ֆիզիկական անձանց.	
- հայտի ներկայացմանը հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում	3 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 2 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- նույն աշխատանքային օրը 1 ժամվա ընթացքում[8]	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 4 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- առաքման ծառայության միջոցով[9]	4 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- նույն օրվա ընթացքում տեղեկանքի կրկնօրինակի տրամադրում - Սոցիալական փաթեթի հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	անվճար
Տեղեկանքների տրամադրում իրավաբանական անձանց և ԱՁ-ների.	
- հայտի ներկայացմանը հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 3 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- նույն աշխատանքային օրը՝ 1 ժամվա ընթացքում	7 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- առաքման ծառայության միջոցով[9]	6000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
	acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 4 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- նույն օրվա ընթացքում տեղեկանքի կրկնօրինակի տրամադրում	անվճար
10. Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ ՀՀ դրամով և արտարժույթով հաշիվների համար՝	0%
11. Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների խնայողական հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝	
- ՀՀ դրամ	4%
- ԱՄՆ դոլար	0.5%
- Եվրո	0.2%

[8] www.acba.am կայքի միջոցով ստացված տեղեկանքը հնարավոր է տրամադրել նույն աշխատանքային օրվա ընթացքում մինչև 15:00-ն կայքի միջոցով դիմում ներկայացնելու և մինչև 17:30-ն մասնաճյուղ այցելելու դեպքում, ընդ որում, www.acba.am կայքի միջոցով ստացված տեղեկանքի հայտի միջնորդավճարը գանձվում է տեղեկանքի կատարման օրը:

[9] Առաքման ծառայության միջոցով տեղեկանքի տրամադրումն իրականացվում է մեկից չորս աշխատանքային օրերի ընթացքում:

- ՌԴ ռուբլի	0%
Տոկոսագումար վճարվում է միայն այն օրերի համար, երբ հաշվի մնացորդը հավասար է կամ գերազանցում է 200,000 ՀՀ դրամը/500 ԱՄՆ դոլարը/500 եվրոն/50,000 ՌԴ ռուբլին: Այն դեպքում, երբ տվյալ օրվա համար հաշվարկված տոկոսագումարը փոքր է 0.01 ՀՀ դրամից, 0.01 ԱՄՆ դոլարից, 0.01 եվրոյից, 0.01 ՌԴ ռուբլուց, ապա տվյալ օրվա համար տոկոսագումար չի վճարվում:	
Խնայողական հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսային եկամտաբերություն[10]	
- ՀՀ դրամ	4.07%
- ԱՄՆ դոլար	0.5%
- Եվրո	0.2%
- ՌԴ ռուբլի	0.0%
12. Իրավաբանական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ ՀՀ դրամով հաշիվների համար՝	
- եթե հաճախորդի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշվի, տվյալ ամսվա միջին օրական մնացորդը չի գերազանցում 20 000 000 ՀՀ դրամը (ներառյալ)	0%
- եթե հաճախորդի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշվի, տվյալ ամսվա միջին օրական մնացորդը գերազանցում է 20 000 000 ՀՀ դրամը	1%
13. Իրավաբանական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ արտարժույթով հաշիվների համար[11]	0%
Ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը և տարեկան տոկոսային եկամտաբերությունը[12] համընկնում են:	
Կառուցապատողի՝ ՀՀ դրամով և արտարժույթով հատուկ հաշիվների մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	
- Բանկի հետ համագործակցող կառուցապատողի հատուկ հաշիվներ	համաձայն Բանկի և Կառուցապատողի միջև կնքված համագործակցության հուշագրի
- Բանկի հետ չհամագործակցող կառուցապատողի հատուկ հաշիվներ	0%

[10] Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկները իրականացվել են՝ համաձայն «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը կանոնակարգ 8/02»-ի:

[11] Եթե հաճախորդի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշվի, տվյալ ամսվա միջին օրական մնացորդը գերազանցում է 500 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը՝ Բանկի կողմից հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափը կարող է սահմանվել սույն սակագներով սահմանված չափից շեղումով:

[12] 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը:

- Ֆիզիկական անձանց ընթացիկ և/կամ խնայողական հաշվի պայմանագրի գործողության ընթացքում ստացված տոկոսագումարները ենթակա են հարկման 10%-ի չափով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:
- Ակբա բանկում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝
  - միայն դրամային ավանդների դեպքում՝ 16 մլն ՀՀ դրամ,
  - միայն արտարժութային ավանդի դեպքում՝ 7 մլն ՀՀ դրամ,
  - և՝ դրամային (7 միլիոնից ավելի), և՝ արտարժութային ավանդների դեպքում միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
  - և՝ դրամային (7 միլիոնից պակաս), և՝ արտարժութային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով

- Ընթացիկ և/կամ խնայողական հաշիվների համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Ընթացիկ հաշվի դեպքում Տոկոսագումարները հաշվարկվում են հաշվին առկա միջին օրական մնացորդի նկատմամբ, ամսական կտրվածքով:
- Ընթացիկ հաշվի դեպքում Հհաշվարկված տոկոսգումարները վճարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:
- Խնայողական հաշվի դեպքում հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:
- Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի պայմանագիրը կնքվում է անժամկետ: